Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հունվարի 31 -ի N 25 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՎԵԴԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ՊՈԼԻԷԹԻԼԵՆԱՅԻՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հաշվի առնելով ՀՀ Արարատի մարզի Փոքր Վեդիի համայնքի ջրամատակարարման համակարգի անմխիթար վիճակը՝ ոռոգման արդյունավետության բարձրացման համար հին խողովակները նորով փոխարինելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդիի համայնքի համար մատակարարել պոլիէթիլենային խողովակներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պող. 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդիի համայնք, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 15,699,150 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդիի համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Նախատեսվում է ծրագիրն իրականացնել 2020 թվականի փետրվարի 13-ից մինչև 2020 թվականի մարտի 30-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է ծրագրի իրականացման ժամկետում գնել 870 մետր պոլիէթիլենային խողովակներ և տեղափոխել ՀՀ Արարատի մարզի Փոքր Վեդիի համայք: Արժեքը 15,699,150 դրամ է:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Պոլիէթիլենային խողովակների ձեռքբերում և տեղափոխում՝ 15,699,150 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ